Վահան Թեքեյանի անվան թիվ 92 հիմնական դպրոց

Արդի հայ գրականություն

խմբակի տարեկան ծրագիր

Տարիքային խումբ՝ 14-15 տարեկաններ /8-9-րդ դասարաններ/

Նպատակը

Ծանոթացնել արդի հայ գրողների կյանքին ու գործունեությանը:

Խորացնել գրական երկը մեկնաբանելու, ինքնուրույն կարծիք արտահայտելու կարողություն:

Ձևավորել գրական երկը ստեղծագործաբար վերլուծելու, ստեղծագործության գաղափարները ընկալելու կարողություն:

Զարգացնել բանավիճելու կարողություն:

Վերջնարդյունքներ

Ներկայացնել գրական երկերում հեղինակի ասելիքի կարևորությունը:

Վերլուծել ստեղծագործության գաղափարը:

Հիմնավորել գրականության դերը անհատի արժեհամակարգի ձևավորման գործում:

Կարևորել ընթերցանության մեջ լեզվաոճական գիտելիքների, պատկերավոր մտածողության առկայության դրսևորումը:

Բովանդակություն

1.Լևոն Խեչոյանի կյանքը և ստեղծագործությունները

2. Լևոն Խեչոյանի ստեղծագործությունների առանձնահատկությունները

3.Պատմությունը Խեչոյանի ստեղծագործություններում

4. Լևոն Խեչոյան-«Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» վեպը

5.Ստեփան Զորյանի «Հայոց բերդը» և Լևոն Խեչոյանի «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» վեպերի համեմատական բնութագիրը

6. Լևոն Խեչոյանի «Միերի դռան գիրքը»՝ որպես «Սասնա ծռեր» էպոսի բանահյուսական հիմքի վրա մշակված արձակ ստեղծագործություն

7. Էպոսի՝ խեչոյանական ընկալման առանձնահատկությունները:

8. Էպոսում արծարծված գաղափարները և հերոսները Լ. Խեչոյանի «Միերի դռան գիրքը» գրքում:

9. Արամ Պաչյանի «Թափանցիկ շշեր» պատմվածքը:

10. Որդիական սիրո պաչյանական ընկալումը:

11. «Ընտանեկան եռանկյունի»/ամուսին-կին-երեխա/

12. «Դեմ, թե կողմ» բանավեճ. պատմվածքի դրական և բացասական կողմերը

13.Հանդիպում գրողի հետ

14. Գրիգի «Հիսուսի կատուն» պատմվածքը

15. «Հիսուսի կատուն» պատմվածքի արդիականությունը և հիմնական գաղափարները

16. «Ինչպիսին պետք է լինի իսկական ընկերը»/զրույց-քննարկում/

17.Հանդիպում գրողի հետ

18. Հուսիկ Արա. կյանքը և ստեղծագործությունները

19. «Հուսիկ Արայի հետ» հանդիպում-ցերեկույթ

20. Սերը Հուսիկ Արայի քնարերգությունում

21. Բառը՝ որպես պատկեր/պատկերավորկման միջոցներ/

22 «Նաիրյան երկրի նոր Հայաստանը» Հուսիկ Արայի երգերում

23. Պետրոս Հոկտանյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը

24. «Հարցազրույցը վարում են աշակերտները».հանդիպում Պետրոս Հոկտանյանի հետ

25. «Ապրիր» բանաստեղծությունը՝ ազգի վերածնման պատգամ

26. Սիրո հոկտանյանական ընկալումը

27. Պատկերավոր մտածողությունը Հոկտանյանի բանաստեղծություններում